ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE6F-D2F3-408A-9E4E հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

ԵԴ2/0172/02/26

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

29 հունվարի 2026թ.
ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով «Խաչպար» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ թիվ ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/56 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին տեղեկությունը ստուգելուն պարտավորեցնելու պահանջի մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Խաչպար» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 2026թ. հունվարի 9-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր

իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ թիվ ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/56 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին տեղեկությունը ստուգելուն պարտավորեցնելու պահանջի մասին:

Դատարանի 2026թ. հունվարի 16-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Որոշումը ստանալուց հետո հայցադիմումը սահմանված ժամկետում կրկին ներկայացվել է դատարան:

Կրկին ներկայացված հայցադիմումը մակագրվել և հասանելի է դարձել դատավոր Գ. Վարդանյանին 2026թ. հունվարի 23-ին:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Հետևաբար՝ հայցադիմումը դատարանում պետք է ընդունված համարել 2026թ. հունվարի 9-ին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Խաչպար» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ թիվ ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/56 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին տեղեկությունը ստուգելուն պարտավորեցնելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

Հայցադիմումը համարել դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ 2026թ. հունվարի 9-ին:

Թիվ ԵԴ2/0172/02/26 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2026թ. փետրվարի 27-ին՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Գրիգորի Վարդանյան

Digitally signed by VARDANYAN GRIGORI 1507850611
Date: 2026.01.29 11:16:56 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am